

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION
DEDICATED TO THE 95TH ANNIVERSARY OF YSU*

1.7 (10)

Общественные науки - Social sciences

*(Социология, экономика, философия, психология, журналистика)
(Sociology, Economics, Philosophy, Psychology, Journalism)*

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

1.7 (10)

*Հասարակական գիտություններ
(Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, փիլիսոփայություն,
հոգեբանություն, ժուռնալիստիկա)*

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

փ. գ. դ., պրոֆ. Ա. Սկրտիչյան
տ. գ. դ., պրոֆ. Մ. Միքայելյան
տ. գ. դ., պրոֆ. Ս. Դանթարջյան
տ. գ. դ., պրոֆ. Թ. Թորոսյան
տ. գ. դ., պրոֆ. Ա. Առաքելյան
փ. գ. դ., պրոֆ. Է. Հարությունյան
փ. գ. դ., պրոֆ. Ս. Չաքարյան
հ. գ. դ., պրոֆ. Յ. Ավանեսյան

բ. գ. դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ. գ. դ., պրոֆ. Մ. Հովսեփյան
տ. գ. դ., դոց. Յ. Մնացականյան
ս. գ. թ., դոց. Ն. Մելքոնյան
փ. գ. թ., դոց. Ա. Խաչատրյան
փ. գ. թ., դոց. Յ. Հովհաննիսյան
հ. գ. թ., դոց. Վ. Միքայելյան
հ. գ. թ., դոց. Ն. Խաչատրյան

Редакционная коллегия:

ժ. ֆ. ն., պրոֆ. Ա. Մկրտիչյան
ժ. է. ն., պրոֆ. Մ. Միքայելյան
ժ. է. ն., պրոֆ. Ս. Գանտարջյան
ժ. է. ն., պրոֆ. Թ. Թորոսյան
ժ. տ. ն., պրոֆ. Ա. Արակելյան
ժ. ֆ. ն., պրոֆ. Յ. Արությունյան
ժ. ֆ. ն., պրոֆ. Ս. Հակարյան
ժ. ֆ. ն., պրոֆ. Գ. Ավանեսյան

ժ. ֆ. ն., պրոֆ. Դ. Պետրոսյան
ժ. ֆ. ն., պրոֆ. Մ. Օվսեպյան
ժ. է. ն., ժոց. Ա. Մնացականյան
կ. ս. ն., ժոց. Ն. Մելկոնյան
կ. ֆ. ն., ժոց. Ա. Խաչատրյան
կ. ֆ. ն., ժոց. Օ. Օվաննիսյան
կ. ֆ. ն., ժոց. Վ. Միքայելյան
կ. ֆ. ն., ժոց. Ն. Խաչատրյան

Editorial Board

DSc, prof. A. Mkrtichyan
DSc, prof. M. Mikayelyan
DSc, prof. S. Ghantarjyan
DSc, prof. T. Torosyan
DSc, prof. A. Arakelyan
DSc, prof. E. Harutyunyan
DSc, prof. S. Zakaryan
DSc, prof. H. Avanesyan

DSc, prof. D. Petrosyan
DSc, prof. M. Hovsepyan
DSc, associate prof. H. Mnatsakanyan
PhD, associate prof. N. Melkonyan
PhD, associate prof. A. Khachatryan
PhD, associate prof. H. Hovhannisyanyan
PhD, associate prof. V. Mikayelyan
PhD, associate prof. N. Khachatryan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ **Ս. Սալխայան**

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական
գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspub@ysu.am, sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.y-su.am

Մարինե Յարմալոյան

*ԵՊՀ, Սոցիոլոգիայի ֆակուլտետ, Սոցիալական աշխատանքի
և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն, հայցորդ
Գիտ. ղեկավար՝ փ.գ.դ., պրոֆ. Լ. Յարմալոյան
Էլ. փոստ՝ marineyarmaloyan@gmail.com*

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ,
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԶԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Անկախության հռչակումից հետո հայաստանյան իշխանությունների համար առաջնահերթ խնդիր էր բնակչության կարիքավոր խմբերի սոցիալական պաշտպանությանն ուղղված և հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնող միասնական սոցիալական քաղաքականության մշակումը: Անցումային գործընթացի պայմաններում նման քաղաքականության մշակումն ու իրականացումը նախ և առաջ պետք է հիմնվի սոցիալական իրականության՝ միմյանց հետ փոխկապված և փոխազդող ենթահամակարգերի, կառուցվածքների, տարրերի, ինչպես նաև հասարակական զարգացման հնարավորությունների և հեռանկարների խոր վերլուծության վրա:

Ներկայումս ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների սոցիոլոգիական ուսումնասիրման ոլորտում գերակայում է Եմպիրիկ մոտեցումը, մասնավորապես՝ հիմնականում իրականացվում են սոցիոլոգիական հետազոտություններ, որոնց նպատակն է ուսումնասիրել տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը, ընտանիքների եկամուտները, բնակչության կենսամակարդակը և այլն: Ըստ այդմ, բնակչության սոցիալական պաշտպանության ուսումնասիրման տեսամեթոդաբանական և պրակտիկ ասպեկտները դեռևս չեն հանդիսանում միասնական սոցիոլոգիական վերլուծության առարկա: Սոցիալական պաշտպանությունը՝ որպես սոցիալական ինստիտուտ, սոցիալական համակարգ և սոցիալական պաշտպանվածության ձեռքբերմանն ուղղված գործունեություն չդիտելը, ըստ էության, աղքատացում է առկա ուսումնասիրությունների գիտական և պրակտիկ հնարավոր արժեքը: Անցումային համարվող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, ասպարեզում առկա ուսումնասիրություններում նման հոլիստիկ մոտեցման անհրաժեշտությունը թելադրված է ռեսուրսների սահմանափակությամբ, սոցիալական ճգնաժամերի անխուսափելիությամբ և սոցիալական քաղաքականության պրակտիկ մոդելներում անարդյունավետ մոտեցումներից հնարավորինս խուսափելու անհրաժեշտությամբ: Ավելին, այսօրինակ մոտեցումն ուղղակիորեն ազդեցություն ունի անցումային երկրում «անցման» համար պահանջվող ժամանակահատվածի տրամաբանական տևողության վրա, ինչպես ցույց են տալիս Արևելյան Եվրոպայում առկա գործընթացները:

Հարկ է նշել, որ սոցիալական պաշտպանության ոլորտի ուսումնասիրության Եմպիրիկ մոտեցման ներկա հենքը պարզունակ է դարձնում դրա հիման վրա մշակվող սոցիալական քաղաքականությունը, քանի որ վերջինս գրեթե ուղղակի դրամական պատասխան է եկամտային աղքատությանը՝ ուշադրությունից դուրս թողնելով համակարգի վրա ազդող բազմաթիվ արտաքին ու ներքին գործոններն ու համապատասխանաբար հնարավոր մեղմիչների գործարկումը:

Փորձենք հիմնավորել, թե ինչու բնակչության սոցիալական պաշտպանության վերլուծությունը կարելի է իրականացնել՝ կիրառելով կառուցվածքագործառույթային, համակարգային և ինստիտուցիոնալ սոցիոլոգիական մոտեցումները:

Համակարգային մոտեցման շրջանակներում սոցիալական պաշտպանության առանձնահատկությունների վերլուծության հիմքում ընկած է ուսումնասիրվող օբյեկտի՝ որպես համակարգի ըմբռնման գաղափարը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել օբյեկտի ամբողջությունը, վերհանել դրանում առկա բազմազան կապերը և միավորել դրանք մեկ ընդհանուր տեսական կառուցվածքում: Համակարգային մոտեցումը ենթադրում է ուսումնասիրել համակարգի բոլոր տարրերը, վերջիններիս արտաքին և ներքին կապերը, համակարգի հիմնական նպատակային գործառույթի որակն ու մակարդակը, բացահայտել արտաքին միջավայրից եկող «մարտահրավերները», «վտանգները», ինչպես համակարգի առանձին տարրերի (բաղադրիչների, ենթահամակարգերի), այնպես էլ ամբողջ համակարգի թաքնված պահուստները (ռեզերվները) և զարգացման հնարավորությունները:

Ժամանակակից հասարակությունում սոցիալական երևույթների ուսումնասիրման ժամանակ կարևորվում է «սոցիալական ենթահամակարգ» հասկացության ներմուծումը: Այն միավորում է անհատներին համակարգի գործառական բնութագրիչներից մեկի հիման վրա, բնութագրվում է կազմակերպման բարձր աստիճանով: Սոցիալական համակարգերն ու ենթահամակարգերը ուսումնասիրելիս անհրաժեշտ է ընդգծել այն բնութագրիչները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել վերջիններիս սոցիալական յուրահատկությունները և առանձնացնել համակարգը ձևավորող չափանիշները:

Յու. Կոլեսնիկովի կարծիքով՝ որպես համակարգը ձևավորող կարևոր բնութագրիչներ հանդես են գալիս համակարգի ընդհանուր նպատակը (նպատակները), յուրաքանչյուր տարրի կողմից որոշակի գործառույթների իրականացումը (որոնք իրենց հերթին պայմանավորված են ընդհանուր նպատակով և համապատասխան խնդիրներով), սոցիալական համակարգի տարրերի միջև սուբորդինացիոն և կոորդինացիոն կապերի, ինչպես նաև կառավարող և կառավարվող ենթահամակարգերի միջև հետադարձ կապի առկայությունը: Սոցիալական համակարգի՝ որպես ամբողջական կառուցվածքի հիմնական տարրերն են մարդիկ, ինչպես նաև նրանց կապերը, փոխազդեցություններն ու հարաբերությունները¹: Ավելին, համակարգի իմաստը նպատակին հասնելու կարողության մեջ է, և հենց այդ կարողությունն է, որ հիմք է ապահովում համակարգի հետագա կենսագործունեության համար: Համակարգը կենսունակ է այնքան ժամանակ, քանի դեռ այն կարող է առաջ քաշել նպատակներ և հասնել դրանց իրականացմանը: Այդպիսի չափանիշի դերում հանդես է գալիս կոնկրետ արդյունքը, որի ձեռքբերմանն է ուղղված սոցիալական համակարգերի գործունեությունը:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի յուրահատուկ բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է գտնել վերջինիս սկզբնական տարրը: Որպես այդպիսի տարր՝ հանդիսանում է նպատակը, այն է՝ սոցիալական ռիսկերից բնակչության պաշտպանությունը բոլոր այն դեպքերում, երբ նրանք դառնում են սոցիալապես խոցելի, այսինքն՝ մարդկանց կենսական պահանջմունքների բավարարումը վտանգվում է իրենցից անկախ տարբեր պատճառներով: Այսպիսով, համակարգը կառուցվածքագործառույթային միասնական ամբողջություն է, իսկ սոցիալական համակարգի կենսագործունեությունը ապահովող և միևնույն ժամանակ համակարգ ձևավորող գործոնների դերում են հանդես գալիս նպատակը, վերջինիս հասնելու կարողությունը և արդյունքը՝ որպես նպատակի ձեռքբերման չափանիշ:

Բնակչության սոցիալական պաշտպանության՝ որպես համակարգի ամբողջությունը պայմանավորված է նրա ենթահամակարգերի փոխկապվածությամբ և փոխազդեցությամբ, ինչպես նաև վերջինիս սուբյեկտների փոխազդեցությամբ: Նման օրգանական համակարգում յուրաքանչյուր տարր ենթադրում է մյուսի գոյությունը, իսկ

¹ Ст'ю Замаева З., Социальная защита, Пермь, 2009, էջ 13:

տարրերի միջև փոխհարաբերությունները, ըստ Ուոլտեր Բաբլիի, հիմնվում են ավելի շատ տեղեկատվության, քան էներգիայի փոխանցման վրա¹:

Այնուամենայնիվ, բնակչության սոցիալական պաշտպանությունը միջանկյալ համակարգ է. ըստ Ու. Բաբլիի՝ միջանկյալ համակարգերն ստեղծվում են սոցիալական համակարգերի կողմից, նպաստում են համակարգի ինքնապահպանմանը, իսկ որոշ միջանկյալ համակարգեր էլ՝ փոփոխությունների իրականացմանը: Ժամանակի ընթացքում միջանկյալ համակարգերը դառնում են առավել անկախ, ինքնավար և համակարգի գործողությունները որոշող²:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը, ինչպես ցանկացած բարձր կազմակերպված համակարգ, նորմալ գործառելու և զարգանալու համար պետք է ունենա ինքնակարգավորման որոշակի ռեսուրսներ, որոնք համակարգի ներսում հավասարակշռությունն ապահովելու հնարավորություն կստեղծեն: Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հավասարակշռության կարգավորիչներ են հանդիսանում պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության այն լրացուցիչ միջոցառումները, որոնք ուղղված են լարվածության թուլացմանը, նպաստում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման ցանկալի վիճակի ձեռքբերմանը և, ըստ էության, լրացուցիչ մեղմիչներ են, որոնք թույլ են տալիս հետ մղել սոցիալական հավասարակշռության խախտումներում առավել անցանկալի զարգացումները:

Նշված համակարգը բավականին բարդ կառուցվածք ունի. համակարգի յուրաքանչյուր տարր յուրահատուկ է և որոշակի դերակատարում ունի անձի սոցիալական պաշտպանության ապահովման գործում: Ս. Յուշկովայի կարծիքով՝ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային տարրերն են սոցիալական ապահովությունը, սոցիալական օգնությունը, սոցիալական աջակցությունը և վերականգնումը, սոցիալական աշխատանքը, սոցիալական նպաստները³:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական գրականության շրջանակներում տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային տարբեր տարրեր: Վերոհիշյալ դասակարգումը, մեր կարծիքով, կարևոր է այնպիսի հիմնախնդրի լուծման համար, ինչպիսին է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական խնդիրների սուբորդինացիան՝ կախված բնակչության, առաջին հերթին՝ սոցիալապես խոցելի խմբերի կարիքներից: Այսպիսով, համակարգային տեսության համատեքստում բնակչության սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես օրգանական ամբողջություն, որը բնութագրվում է ձևավորմամբ, կայացմամբ և զարգացմամբ: Այն ունի գործառման սեփական օրինաչափություններ և սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է դիտարկել որպես իրականացվող վերլուծությունների յուրովի ելակետեր:

Ինչ վերաբերում է կառուցվածքային ֆունկցիոնալիզմի համատեքստին, ապա բնակչության սոցիալական պաշտպանության վերլուծությունը նպատակահարմար է նախ և առաջ իրականացնել Թալկոտ Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի շրջանակներում: Ըստ Թ. Պարսոնսի՝ ցանկացած համակարգի գոյատևման համար պետք է իրականացնել հետևյալ 4 գործառույթները.

- Հարմարում (adaptation). այս գործառույթի շնորհիվ համակարգը կարողանում է հաղթահարել կամ կատարել արտաքին միջավայրից եկող պատահական

¹ Տե՛ս **Ритцер Дж.**, Современные социологические теории, 5-е изд., Санкт-Петербург, 2002, էջ 217:

² Տե՛ս նույն տեղում, էջ 218:

³ Տե՛ս **Юшкова С.**, Структура и условия функционирования эффективной системы социальной защиты населения Российской Федерации в условиях социально-экономических изменений, автореферат канд. экон. наук, Москва, 1997, էջ 10-11:

բնույթ կրող պահանջները: Համակարգը, ըստ էության, հարմարվում է արտաքին միջավայրին, ինչպես նաև հարմարեցնում է միջավայրն իր պահանջմունքներին:

- Նպատակին հասնել (goal attainment). այս գործառույթի շնորհիվ համակարգը կարողանում է սահմանել իր առաջնային նպատակները և հասնել դրանց:
- Ներառում (integration). համակարգը պետք է կոորդինացնի իր տարրերի միջև առկա փոխհարաբերությունները և կառավարի մյուս երեք ֆունկցիոնալ իմպերատիվների (A, G, L) հարաբերությունները:
- Լատենտ գործառույթ (արժեքային նմուշների պահպանում). այս գործառույթի շնորհիվ համակարգը պահպանում է ինչպես անհատների մոտիվացիան, այնպես էլ այն մշակութային արժեքները, որոնք ձևավորում և պահպանում են այդ մոտիվացիան¹:

Ըստ էության, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը նույնպես իրականացնում է վերոհիշյալ 4 գործառույթները: Այսպես, սոցիալական պաշտպանության համակարգը լուծում է նյութական, մարդկային, մշակութային ռեսուրսների ռացիոնալ կազմակերպման և բաշխման խնդիրը, որը նման է ներքին իրավիճակներին և արտաքին փոփոխություններին հարմարվելու խնդրին: Ինչ վերաբերում է նպատակին հասնելու գործառույթին, ապա սոցիալական պաշտպանության համակարգը մշակում է իր նպատակները և խթանում հասնել դրանց իրագործմանը: Բացի այդ, սոցիալական պաշտպանության համակարգն իրականացնում է նաև ինտեգրացիայի գործառույթը սոցիալական վերահսկողության ինստիտուտների միջոցով, որոնք ստեղծում և պահպանում են ընդհանուր նորմերն ու արժեքները: Եվ վերջապես, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը գոյություն ունեցող կարգը պահպանելու համար պետք է մշակի այնպիսի մեխանիզմներ, որոնք նպաստում են մարդկանց սոցիալականացման գործընթացին: Այդ գործընթացը որոշակի նախադրյալներ է ստեղծում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ինչպես կայունության, այնպես էլ փոփոխության համար:

Թ. Պարսոնսի տեսության շրջանակներում այս համակարգը վերլուծելիս անհրաժեշտ է շեշտադրել բնակչության սոցիալական պաշտպանությունն ապահովող հիմնական սուբյեկտների փոխազդեցությունը, սոցիալական քաղաքականության մշակման և իրագործման գործընթացներին մասնակցող տարբեր դերակատարների վարքը, մոտիվացիան, ինչպես նաև այն սոցիալական համատեքստը, որի շրջանակներում կայացվում են քաղաքական որոշումները: Անհրաժեշտ է քննարկել նաև բնակչության սոցիալական պաշտպանությունն ապահովող հիմնական սուբյեկտների և օբյեկտների միջև փոխհարաբերությունները:

Սոցիալական պաշտպանության օբյեկտ է հանդիսանում գործնականում երկրի ողջ բնակչությունը: Սոցիալական ծրագրերի և միջոցառումների իրականացման օբյեկտ վերջին հաշվով դառնում են կոնկրետ մարդիկ, նրանց միավորումները, որոնք հանդիսանում են սոցիալական պաշտպանության նպատակային խմբեր: Ավանդաբար առանձնացվում է երեք այդպիսի նպատակային խումբ.

- Ողջ բնակչությունը (կյանքի անվտանգության ապահովում, սպառողների շահերի պաշտպանություն, ազգի առողջության ամրապնդում և այլն),
- Բնակչության առանձին խմբեր ու շերտեր (մտավորականություն, զինծառայողներ, կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտների աշխատողներ),

¹ Տե՛ս Ритцер Дж., էջ 118-119:

- Բնակչության խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամներ, գործազուրկներ և այլն)¹:

Որպես սոցիալական պաշտպանության սուբյեկտ՝ պետությունից զատ հանդես են գալիս պետական գերատեսչությունները և հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները, արտաբյուջետային հիմնադրամները, հասարակական կազմակերպությունները, քաղաքացիները և այլն:

Ֆունկցիոնալիզմի մեկ այլ ներկայացուցչի՝ Էմիլ Դյուրքեյմի կարծիքով սոցիալական պաշտպանության նպատակը ամբողջ հասարակության կենսապայմանների բարելավումն է: Հասարակության բարեկեցության ապահովման և հավասարակշռության պահպանման համար պետք է բավարարվեն հասարակության անդամների և սոցիալական ինստիտուտների ֆիզիկական, Էմոցիոնալ, տնտեսական կարիքները²:

Այսպիսով, ըստ ֆունկցիոնալիստների՝ սոցիալական պաշտպանության նպատակն է ապահովել հասարակության բոլոր օղակների նորմալ գործառույժը՝ դրանով իսկ ապահովելով ամբողջ սոցիալական համակարգի կայուն աշխատանքը: Ըստ Էռնթյան, ֆունկցիոնալիստները սոցիալական պաշտպանության նպատակը տեսնում են որևէ խոցելի խմբի, ինչպես նաև ամբողջ հասարակության կենսապայմանների բարելավման մեջ: Այս գաղափարները արծարծված են նաև Ռոբերտ Մերտոնի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի շրջանակներում³:

Ինչ վերաբերում է այս կամ այն սոցիալական երևույթն ուսումնասիրելիս ինստիտուցիոնալ մոտեցման կիրառմանը, ապա այն բավականաչափ հիմնավորված և գիտականորեն փաստարկված է⁴: Բնակչության սոցիալական պաշտպանության ուսումնասիրումը ինստիտուցիոնալ մոտեցման համատեքստում նախ և առաջ ենթադրում է, որ ժամանակակից հասարակությունում առկա է տվյալ ինստիտուտը և ազդեցություն ունի հասարակության գործառնական կոնկրետ պայմանների փոփոխության վրա: Բացի այդ, տվյալ ինստիտուտը հանդիսանում է հասարակական կյանքի սոցիալական ոլորտի անբախտելի տարրերից մեկը:

Ըստ Էռնթյան, սոցիալական պաշտպանությունը, իր գործառնական բնույթով լինելով բավականաչափ ամբողջական համակարգ, իրենից ներկայացնում է ինքնուրույն սոցիալական ինստիտուտ, որին բնորոշ են որոշակի յուրահատկություններ՝ պայմանավորված վերջինիս շրջանակներում տրամադրվող ծառայությունների տեխնոլոգիաներով: Բնակչության սոցիալական պաշտպանությունը սոցիալական ինստիտուտ է, բանի որ՝

- Այն սոցիալական փոխազդեցության կայուն վերարտադրող ձև է, որի շնորհիվ յուրաքանչյուր հասարակություն կիրառում է սոցիալական պաշտպանության իր ձևերը՝ ելնելով զարգացման իր մակարդակից:
- Սոցիալական պաշտպանությանը բնորոշ է նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև հասարակությունում ձևավորված բարոյական նորմերի և պատկերացումների ամբողջությունը:
- Սոցիալական պաշտպանությանը բնորոշ է մասնագիտական և կադրային որոշակիությունը, այսինքն՝ սոցիալական պաշտպանության համակարգում աշխատում են հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունե-

¹ Տե՛ս **Rodney A.**, *Impacting social policy: a practitioner's guide to analysis and action*, Books/Cole, 2003, էջ 15:

² Տե՛ս **Durkheim E.**, *The division of labour in society*, New York, The Free Press, 1933, էջ 114:

³ Տե՛ս **Merton R.**, *Social Theory and Social Structure*, New York, The Free Press, 1968 [1949]:

⁴ Տե՛ս **Анбергова И.**, *Институционализация социальной работы в современной России: состояние и проблемы. «СОЦИОПОСТИ: междисциплинарный сборник научных работ по социологии и социальной работе», № 1'10, էջ 208:*

ցող մասնագետներ, առկա են այդպիսի մասնագետներ պատրաստող հաստատություններ և այլն:

- Սոցիալական պաշտպանությանը բնորոշ է սոցիալական նորմերի և սպասումների որոշակի ինտերնալիզացիա. սոցիալական պաշտպանություն իրականացնողները, ինչպես նաև նրանք, ում ուղղված է սոցիալական պաշտպանությունը, որոշակի ձևավորված վերաբերմունք ունեն այս սոցիալական երևույթի նկատմամբ:

Յուրաքանչյուր հասարակություն այս կամ այն չափով հոգ է տանում իր անդամների սոցիալական պաշտպանության համար: Այդ խնդրի լուծման պատասխանատվությունն ուղղակի դրվում է սոցիալական պաշտպանության ինստիտուտի վրա, որը, որպես սոցիալական ինստիտուտ, որոշակի սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված իրավական նորմերի ամբողջություն է: Միջազգային ենթատեքստում սոցիալական պաշտպանությունը սովորաբար կապված է քաղաքացիների՝ օրենսդրությամբ սահմանված որոշակի կատեգորիաների հետ, ովքեր, աշխատունակության կորստի, աշխատանքի բացակայության կամ այլ պատճառներից ելնելով, իրենց և իրենց ընտանիքների անաշխատունակ անդամների կենսական պահանջմունքները բավարարելու միջոցներ չունեն: Սոցիալական պաշտպանության ինստիտուտի շրջանակներում այն քաղաքացիներին, ովքեր հայտնվել են օրենսդրությամբ սահմանված կարգով անբարենպաստ իրավիճակներում, տրամադրվում է դրամական և բնամթերքի տեքստ օգնություն, ինչպես նաև տարբեր ծառայություններ: Բացի այդ, սոցիալական պաշտպանության ինստիտուտը ենթադրում է նաև կանխարգելիչ բնույթի միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են անբարենպաստ իրավիճակների կանխմանը: Սոցիալական պաշտպանությունն իրականացվում է կազմակերպահրավական տարբեր ձևերով՝ ներառյալ գործատուների անհատական պատասխանատվությունը, սոցիալական ապահովագրությունը, հասցեական սոցիալական օգնությունը, պետական սոցիալական ապահովությունը և այլն: Սոցիալական պաշտպանության այս կամ այն կազմակերպահրավական ձևի կիրառումը կարող է առաջացնել տնտեսական և սոցիալական տարբեր հետևանքներ, որոնց կանխատեսումը կարևոր է նպատակին հասնելու միջոցների ընտրության գործընթացում:

Այսպիսով, սոցիալական պաշտպանությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է դիտել որպես *սոցիալական ինստիտուտ, սոցիալական համակարգ և սոցիալական պաշտպանվածության ձեռքբերմանն ուղղված գործունեություն*, ինչը թույլ է տալիս հարստացնել, լրամշակել էմպիրիկ ուսումնասիրությունների ու դրանց հիման վրա մշակվող սոցիալական պաշտպանության քաղաքականության «կարիք-պատասխան» ոչ տպավորիչ ներկա փաթեթը: Այս խնդիրը հատկապես արդիական է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի ներկա արմատական բարեփոխումների համատեքստում: Ակնհայտ է, որ տեսական ու հայեցակարգային բնույթի չլուծված խնդիրներն ուղղակիորեն արտացոլվում են իրագործվող սոցիալական բարեփոխումներում և վտանգում դրանց արդյունավետ իրագործումը:

Մարինե Յարմալոյան

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԱՅԻՆ,
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ սոցիալական պաշտպանություն, սոցիալական պաշտպանության համակարգ, սոցիալական պաշտպանության ինստիտուտ, սոցիալական պաշտպանվածություն, համակարգային մոտեցում, կառուցվածքագործառնության ինստիտուտ, ինստիտուցիոնալ մոտեցում

Այսօր ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ուսումնասիրման տեսամեթոդաբանական և պրակտիկ ասպեկտները միասնական սոցիոլոգիական վերլուծության առարկա չեն հանդիսանում: Սույն հոդվածի շրջանակներում բնակչության սոցիալական պաշտպանությունը վերլուծվում է սոցիոլոգիական համակարգային, կառուցվածքագործառնության և ինստիտուցիոնալ մոտեցումների շրջանակներում: Այդ վերլուծության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ բնակչության սոցիալական պաշտպանությունն անհրաժեշտ է դիտել որպես սոցիալական ինստիտուտ, պետական կազմակերպակառավարչական համակարգ և սոցիալական պաշտպանվածության ձեռքբերմանն ուղղված գործունեություն:

Марине Ярмалоян

**СИСТЕМНЫЙ, СТРУКТУРНО-ФУНКЦИОНАЛЬНЫЙ И ИНСТИТУЦИОНАЛЬНЫЙ
АНАЛИЗ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ**

Ключевые слова: социальная защита, система социальной защиты, институт социальной защиты, социальная защищенность, системный подход, структурно-функциональный подход, институциональный подход

Теоретико-методологические и практические аспекты исследования социальной защиты населения в Армении еще не стали предметом целостного социологического анализа. Используя три социологических подхода – системный, структурно-функциональный и институциональный – в статье анализируется система социальной защиты населения. На основе результатов этого анализа можно сказать, что социальную защиту необходимо рассматривать в трех аспектах: социальный институт, государственная организационно-управленческая система, деятельность по достижению социальной защищенности.

Marine Yarmaloyan

**SYSTEMIC, STRUCTURAL-FUNCTIONAL AND INSTITUTIONAL ANALYSIS OF SOCIAL
PROTECTION OF POPULATION**

Keywords: social protection, system of social protection, institute of social protection, social security, systemic approach, structural-functional approach, institutional approach

Theoretical, methodological and practical aspects of the study of social protection are not yet considered as the subject of holistic sociological analysis in Armenia. The article analyzes the social protection system of population using the three sociological approaches: systemic, structural-functional and institutional. Basing on that analysis we can conclude that social protection should be considered in three aspects: social institution, state organizational management system, activities to achieve social security.